Սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 20 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման նախագծում» և «Հայաստանի Հանրապետության Տավուշի Խաչարձան գյուղի համայնքային կենտրոնի կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հայ եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերի տպագրություն», «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի ավտոկայանատեղիի ասֆալտապատման և նախագծման աշխատանքերի իրականացում» , «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերելակների սպասարկման աշխատանքերի իրականացում» և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի կահավորում» ծրագրերը.

«Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Սրբոց թարգմանչաց» եկեղեցու կառուցում» ծրագիրը.

«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան գյուղում մանկապարտեզի կառուցում» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 156 և 159 մանկապարտեզների սանհանգույցների վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Երնջատապ համայնքին շինարարական նյութերի մատակարարում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դարանակ, Մեծ Մասրիկ, Կուտական և Տրետուք համայնքներում մետաղական կոնստրուկցիանորով խաղասարքերի մատակարարում ու տեղադրում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովակ համայնքում մինիֆուտբոլի դաշտի կառուցում» , «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի համայնքի կաթի հավաքման և պահպանման կետի վերանորոգում» և «Մետաղական կոնստրուկցիաներով խաղասարքերի մատակարարում և տեղադրում Լոռու մարզի մի շարք համայնքներում» ծրագրերը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան թիվ 82 հիմնական դպրոցի մարզադահլիճի և բուժական ֆիզկուլտուրայի սենյակի հիմնանորոգում», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարամեջ համայնքում ջրագծի կառուցում» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքում ջրագծի կառուցում» ծրագրերը.

«Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 օժանդակ դպրոց» ՊՈԱԿ-ի ջեռուցման համակրագի տեղադրում» ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մասնակի վերոնորոգման աշխատանքների իրականացում» ծրագիրը.

«Դեպի Հայք» հիմնադրամի կողմից իրականացվող «Դեպի Հայք» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: